

Մանուկյան վարդապետ Ա. Ս. Գրիգորեանցի ՄԱՍԻՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ Ա. Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՄԱՍԻՆ

(1795—1829)

Մահուան ութուն եւ հինգ ամեայ տարելիցի առքիւ.

Մանուկյան վարդապետ Կիմիւշանացի իւր պատմութեան մէջ (չտպագրուած) Ռուսաց գրող Գրիգոր Գովին սպանելու մասին գրում է հետեւալը.

«Սպանութիւն դեսպանին Ռուսաց.

Որպէս սովորութիւն է յետ պատերազմաց ժողովիլ զգերեալն իւրաքանչիւր Տէլութեանց, ըստ որում ի գողունի գալստենէ Ապպա Մըզային ի կողմի Ղարապաղու, գերեցան բազումք, և յօրինաւոր վերջին այս պատերազմաց փախստեայք և գերեալք ի դաշնադրութեան վճռեցան յետ տալ:

Որոց վասն ի կողմանէ հզօր Կայսերութեան Ռուսաց դեսպան առաքեցաւ նորին գերազանցութիւն Գրիգոր Պոլիստրատովս ի թէհրան առ Շահն, ժողովեալ զգերեալ և փախուցեալսն: Իսկ անզուսպ պարսից սրիկայք, շեղք և ուլամայք, տեսին որ իւրեանց ըստ հաճոյս սեպհականեալ զաղջկունս և զկանայս, յետս պահանջին և առնուն, խոսքութիւնս յարուցեալ մտանեն ի բնակարան դեսպան Գրիգոր Պովին, թէ 1829 ամի կոտորեն զամենայն ի տան նորին եղեալն, սպանանեն նաև զինքն զդեսպանն:

Տեսեալ ծերունի Քէթալի Շահն և ժառանգ նորին Ապպաս Միրզայն և այլ խոհական իշխանաւորք, թէ տակաւին առաջի պատերազմի վէրքն չառողջացեալ, երկրորդին դուռն մեծ բաց լինի ի պատճառս անուսայից: Պարսկային խորամանկութեամբ պատրաստեն զԱւագ որդի Ապպաս Միրզային զԽոսրով խանն մեծամեծ ընծայիւր, զայր խոհական և ծանօթ գաղղիական լեզուի, փառաշուր և գեղեցիկ տեսլեամբ, առաքեն ի Սանկտ Պետրուրգ յոտս նորին Կայսերական Մեծութեան առաջին Նիկոլա Պավլովիչի, որոյ գնացեալ խոհականութեամբ իւրով շնորհ ընկալեալ ամէնողորմած Կայսերէ ներողութիւն եղեւ քրէական յանցանաց իւրեանց պարգևեաց սոյն Խոսրով խանին մէկ Քուսուլ ի պարտուց իւրեանց, որ է չորս միլիոն մանէթ, և տասն և վեց միլիոն ոռուպի ռուսաց:

Եւ առաւել զարմանալին, որ նոյն Խոսրով Մըզայ կանին
Կայսրն չորհեաց և զառաջին աստիճան կավալէր Ալէքսանդրսկոյ
Նելսոնյն բալեանգեայ Աստեղբն իւրուի:

Որով եղի ընդարձակութիւն Պարսից և Օսմանիան Տաճկաց կրել զիսաչ և զկալալերս ի պարանոցս իւրիանց ծառայողքն Տէրութեան»:

Մեզ համար որքան որ անծանօթ չէ «Գորե օրե յմա» (Խելքից պատուհաս) յայտնի կատակերգութեան հանձարեղ հեղինակ Ա. Ա. Գրիգորեավի կենսագրութիւնը՝ յամենայն գէպս հետաքրքրական է նորա մահից (1829թ. յունուար 30) 85 տարի յետոյ կարդալ ոռւս հեղինակին ժամանակակից հայ պատմագրի խօսքերը նորա մահուան մասին։ Մանուէլ վարդապետ Կիւմիշսանացին, որ ապրել է 18-րդ դարի վերջերում և 19-րդի սկզբներում զրում է իւր ժամանակակից գլխաւոր անցքերի պատմութիւնը և, ի միջի այլոց, առանձին վերնագրով «Սպանումն դեսպանին Ռուսաց» պատմում է Գրիգորեգովի սպանութեան մասին, որ վերև առաջ բերինք։ Ռուս պարսկական պատերազմից յետոյ՝ երբ դաշնագրութեան համաձայն Պարսից կառավարութիւնը պէտք է վերադարձնէր գերուած հայերին և վրացիներին՝ Ռուսաց կողմից նշանակուեց Գրիգորեգովը Թեհրանի դեսպան և յանձնարարուեց Պարսից կառավարութիւնից յետ պահանջել բոլոր գերուած քրիստոնեաներին։ Դեսպան Գրիգորեգովը մեծ եռանկով կատարում էր իւր պարտքն և պաշտօնական և մարդասիրական տեսակէտից։ Ահա և այդ ժամանակներն եր՝ որ մոլեռանդ պարսիկները կատարած յարձակում են դեսպան Գրիգորեգովի վրայ և սպանում նորան 30 յունվարի 1829թուին։ Նա թաղուած է Թիֆլիսի Դաւթի սարի լանջում գտնուած նոյն անունով վանքի բակում։

Բարգեն վարդապետ